

## ՀԱՍՏՉԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության,  
Հայաստանի Հանրապետության  
Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզպետարանների  
և

“Բժիշկներ առանց սահմանների” միության հայաստանյան մասնաճյուղի միջև  
կնքված

“Ինտեգրացված ռեգուլյար և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ծրագրի  
ընդլայնում Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում”

Փոխըմբռնման հուշագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան

\_\_31-ը դեկտեմբերի, 2012 թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս  
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար՝ պարոն Դերենիկ  
Դումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա,  
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանը, ի դեմս Շիրակի  
մարզպետ՝ պարոն Աշոտ Գիզիրյանի, Հայաստանի Հանրապետության Լոռու  
մարզպետարանը, ի դեմս Լոռու մարզպետ՝ պարոն Արթուր Նալբանդյանի, և  
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանը, ի դեմս Կոտայքի  
մարզպետ՝ Կավալենկո Շահգալոյանի, մի կողմից, և

“Բժիշկներ առանց սահմանների” միությունը, ի դեմս Առաքելության ղեկավար՝  
տիկին Աննաբել Ջերիբի, որը գործում է ԲԱՍ միության հայաստանյան մասնաճյուղի  
Կանոնադրության և համապատասխան Լիազորագրի համաձայն,  
(բոլորը միասին այսուհետ՝ “Կողմեր”)

հաշվի առնելով, որ՝

ա) նույն Կողմերի միջև 2011 թ. մայիսի 05-ին կնքվել է “Ինտեգրացված ռեգուլյար և  
դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ծրագրի ընդլայնում Շիրակի, Լոռու և  
Կոտայքի մարզերում” Փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ “Փոխըմբռնման  
հուշագիր”),

բ) Կողմերը փոխադարձ համաձայնության են եկել երկարաձգել նշված  
Փոխըմբռնման հուշագրի գործողության ժամկետը՝ հուշագրով սահմանված  
պայմաններով,

Կողմերը համաձայնության եկան կատարել հետևյալ փոփոխությունը նշված  
Փոխըմբռնման հուշագրում.

1. Փոխընթացման հուշագրի “է” կետում “2012 թվականի դեկտեմբերի 31-ը” բառերը փոխարինել “2013 թվականի դեկտեմբերի 31-ը” բառերով:
2. Սույն համաձայնագրում չնշված՝ Փոխընթացման հուշագրի այլ դրույթները թողնվում են անփոփոխ:
3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Փոխընթացման հուշագրի անբաժանելի մասը:
4. Սույն համաձայնագիրը բաղկացած է 2 էջից և կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Համաձայնագիրը կնքված է հավասար իրավաբանական ուժ ունեցող հինգ օրինակից՝ մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

Ի հաստատումն վերոհիշյալի ստորագրելով, սույն համաձայնագիրը՝

Հայաստանի Հանրապետության  
առողջապահության նախարար՝  
պարոն Դ.Դումանյան




Հայաստանի Հանրապետության  
Շիրակի մարզպետ՝  
պարոն Աշոտ Գիզիրյան



Հայաստանի Հանրապետության  
Լոռու մարզպետ՝  
պարոն Արթուր Նալբանդյան



Հայաստանի Հանրապետության  
Կոտայքի մարզպետ՝  
պարոն Կավալենկո Շահգալդյան



“Բժիշկներ առանց սահմանների”  
միության հայաստանյան մասնաճյուղի ղեկավար՝  
տիկին Աննաբել Ջերիբի

*(Signature)*

